

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի (2015-16 ուստարվա)

02.07.2015թ.

ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը (ՄԿՈԱ) մասնաճյուղում իրականացնում է որակի ներքին ապահովման գործընթացը՝ առաջնորդվելով կրթության որակի բնագավառում մասնաճյուղի ընտրած քաղաքականությամբ և բաժնի՝ 2015-16 ուստարվա աշխատանքային պլանով, որը կազմվել է համաձայն մասնաճյուղի զարգացման 2011-15 ռազմավարական ծրագրի պլան-ժամանակացույցից բխող կարճաժամկետ պլանի: Բաժնի աշխատակիցները, համաձայն իրենց գործառույթների, իրականացրել են 2015-16 ուստարվա պլանով սահմանված աշխատանքները:

ՄԿՈԱ բաժինն իր առջև դրված աշխատանքներն իրականացրել է համապատասխան ժամկետներում, իր գործունեությունը ներկայացրել է հիմնական և կիսամյակային աշխատանքային պլաններում, ապա ամրագրել արձանագրություններում:

Պլանով նախատեսված 19 աշխատանքների հիմնական մասը բաժինն ամբողջությամբ ավարտին է հասցրել, կան պարբերաբար իրականացվող գործընթացներ, որոնք նույնպես եղել են ուշադրության կենտրոնում և իրականացվել են պատշաճ մակարդակով: Պլանով նախատեսված մի շարք գործընթացներ իրականացվել են գրեթե 80-90%-ի չափով, պատճառը բաժնի աշխատակիցների նաև պլանից դուրս որոշ ծանրաբեռնվածությունն է եղել, մասնավորապես նրանք իրականացրել են մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն, կազմել են նրա զեկույցը, կատարել են մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի վերլուծություն, կազմել են նրա զեկույցը, կատարել են նաև մասնաճյուղի 2015-16 ուստարվա գործունեության վերլուծություն, կազմել են նրա զեկույցը և այլն:

Բաժնի աշխատակիցները կարևորում են մասնաճյուղում որակի ներքին ապահովմանը միտված գործընթացների արդյունավետ իրականացումը և իրենց մշտական խորհրդատվությամբ աջակցում են բոլոր ենթակառուցվածքներին՝ ուղղորդելով նրանց գործընթացներն իրականացնելու որակի ապահովման շրջափուլով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում), առաջնորդվելու համապատասխան քաղաքականություններով, կանոնակարգերով և ընթացակարգերով:

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն իրականացրել է խորհրդատվություններ, փաստաթղթային հիմքերի համալրումներ և ներդրում, հարցումներ, վերլուծություններ:

1. Մշակել և ԳԻՍ հաստատմանն է ներկայացրել ԵՊՀ ԻՄ-ում ուսանողների գնահատման վերաբերյալ հարցման կանոնակարգը, որի նպատակն է կանոնակարգել գնահատման գործող համակարգի վերաբերյալ ուսանողական և դասախոսական հարցումը, հաստատել համապատասխան հարցաշարերը, որոնց միջոցով պետք է ուսումնասիրվեն ուսանողների միջանկյալ և եզրափակիչ գնահատման գրավոր, բանավոր և թեստային տարբերակների առավելություններն ու թերությունները: Հարցումն ակնկալում է տեղեկատվության հավաքագրման և մշակման միջոցով հետազայում բարելավել ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման գործընթացի իրականացման ձևերի, չափանիշների, մեթոդների, գնահատման օբյեկտիվության և ուսանողի ցուցաբերած արդյունքների լիարժեք արտացոլման հնարավորությունը, առաջարկել գնահատման նոր ձևեր:

2. Վերանայել է Որակի կառավարման հանձնաժողովի լիազոր ներկայացուցչի կանոնակարգը: Վերանայվել է նախկին գործող կանոնակարգը որակի ներքին գործընթացների

իրականացման նոր պահանջներին համապատասխան, մշակվել է նոր կանոնակարգ և կազմակերպվել է նրա քննարկումը, ներկայացվել է ԳԽ հաստատման:

3. Իրականացրել է ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող մշակված կանոնակարգի քննարկումը և հաստատումը: Մեպտեմբեր ամսին կանոնակարգի նախագիծը ուղարկվել է ֆակուլտետներ քննարկման, հավաքագրվել են առաջարկները և կազմվել է կանոնակարգի վերջնական տարբերակը: Այն նպատակ ունի կանխել մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումները, պահպանելու հեղինակային իրավունքը և այլն:

4. Մշակել է Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ԵՊՀ ԻՄ քաղաքականությունը: Համագործակցելով «Մասնավարժության և հոգեբանության» ամբիոնի մանկավարժների հետ մշակվել է մասնաճյուղի քաղաքականությունը դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հարցում, որով մասնաճյուղը կարևորում է ժամանակակից, ակտիվ և իտերակտիվ բազմազան մեթոդների ներդրումն ու կիրառումը: Քաղաքականության մեջ նշված են նրա նպատակները, խնդիրները, սկզբունքները:

5. Մշակել է ԵՊՀ ԻՄ քաղաքականությունը մասնագիտության կրթական ծրագրերի որակի գնահատման բնագավառում: Մասնագիտության կրթական ծրագրերի որակի **գնահատումը** /ապահովումը/ հանրակրթության պետական չափորոշիչների հիմնական տարրերից մեկն է, այն կարգավորում է կրթության համակարգն ու ապահովում հետադարձ կապը, կրթական գործընթացն ուղղորդում է տարբեր կրթական արդյունքների ձեռքբերմանը: Այն ներառում է մասնաճյուղի գործունեության նպատակները, հիմնական խնդիրները, քաղաքականության իրականացման սկզբունքները, իրականացման մեխանիզմները կրթական ծրագրերի որակի գնահատման բնագավառում:

6. Ա.Մակարյանի նախաձեռնությամբ և մասնաճյուղի իրավախորհրդատուի անմիջական մասնակցությամբ վերանայվել է մասնաճյուղի տնօրենության կանոնակարգը: Ուսումնասիրման ընթացքում նկատվել են նախկին կանոնակարգում մի շարք վրիպումներ, անճշտություններ, խմբագրական թերություններ: Վերանայվել, խմբագրվել և կազմվել է գրագետ և այժմեական հնչողությամբ կանոնակարգ:

7. Հատուկ կազմված աշխատանքային խմբի կազմում բաժնի աշխատակիցներն իրականացրել են մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծություն, ընդորոմ նրանցից յուրաքանչյուրը կրել է ինքնավերլուծության զեկույցի կոնկրետ բաժնի պատասխանատվությունը: Աշխատանքները բարեհաջող կլատարվել են, կազմվել է զեկույցի ավարտուն տեքստը:

8. Կատարել է մասնաճյուղի 2011-15 զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների իրականացման վերլուծություն, կազմել է ծրագրի կատարողականի վերաբերյալ զեկույց և ապահովել նրա տպագրությունը և հասանելիությունը բոլոր բաժիններին:

9. Հավաքագրել, խմբավորել և ամփոփ կազմել է արտաքին և ներքին շահակիցների առաջարկությունների և կարծիքների փաթեթ: Դրանք նվիրված են եղել դասավանդման որակին և արդյունավետությանը, մասնաճյուղի պրակտիկանտների, շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքին, գնահատման համակարգի արդյունավետությանը, ներքին շահակիցների կողմից մասնաճյուղի գործունեության տարբեր կողմերի գնահատումներին, ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածությանը: Բաց հարցերով ներկայացված մտահոգություններն ու առաջարկությունները հնարավորություն կտան բացահայտել սվյալ ոլորտում թերությունները, մշակել դրանք շտկելու մեխանիզմներ:

Կատարվել է դրանց վերլուծություն, արդյունքները տեղադրվել են կայքում և տրամադրվել համապատասխան ստորաբաժանումներին:

10. Կատարել է տարբեր մեխանիզմներով վերահանված Ուսանողների կրթական կարիքների և նրանց լուծումների ուսումնասիրություն՝ հիմնականում հարցումների բաց հարցերի միջոցով: Հավաքագրված տվյալները ներկայացվել են ամփոփ աղյուսակում, դրաբց վերլուծությունը տեղադրվել է կայքում, ուղարկվել են ամբիոններին՝ ակնկալելով, որ նրանք ուշադրություն կդարձնեն ուսանողներին հուզող հարցերին, կլինեն նրանց աջակից ուսումնառության ողջ ընթացքում:

11. Իրականացրել է 2011-15թթ. ժամանակահատվածում ԵՊՀ ԻՄ-ում պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեության վերլուծություն: Ուսումնասիրությունները կատարվել են մասնաճյուղի ինքնավերլուծության զեկույցի «Հետազոտությունը և զարգացումը» համապատասխան չափանիշի պահանջների և մասնաճյուղի զարգացման 2011-15թթ. ռազմավարական ծրագրի «Գիտական հետազոտություններ և նորարարություն» 2-րդ գերակա նպատակի իրականացման շրջանակներում: Կատարվել է հավաքագրված տվյալների վերլուծություն՝ ըստ կազմակերպած գիտական նստաշրջանների և գիտաժողովների մասնակցության և «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուի հրատարակումների:

12. Պատրաստել է ԵՊՀ ԻՄ 2014-15 ուստարվա գործունեության վերլուծության զեկույցը: Հավաքագրվել են տվյալներ, կատարվել է մասնաճյուղի գործունեության համակողմանի վերլուծում, դիտարկվել են մասնաճյուղի ձեռքբերումները կրթական ծրագրերի ներդրման, մասնաճյուղում որակի ապահովման, ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, համագործակցային ծրագրերի իրականացման, տեղեկատվական ռեսուրսների զարգացման, գրադարանի աշխատանքի բարելավման և գրականությամբ համալրման, հասարակայնության հետ կապերի ակտիվացման և մասնաճյուղի գովազդարշավի ճիշտ կազմակերպման, ուսանողական կառույցների ակտիվության բարձրացման ուղղությամբ:

13. Համակարգել է ֆակուլտետներում Որակի կառավարման հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչների հետ իրականացվելիք աշխատանքները, որոնց նպատակն է կառուցվածքային ստորաբաժանումներում կազմակերպել կրթական, գիտական և նորարարական գործունեության որակի ապահովման գործունեություն, աջակցել խորհրդատվությամբ, ապահովել անհրաժեշտ փաստաթղթերով, պլաններով, ժամանակացույցերով, ուղղորդել նրանց գործունեությանը՝ ֆակուլտետներում որակի ներքի գործընթացների ներդրման գործում:

14. Կատարել է Մասնաճյուղի գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների /ԳՄՑ 2011-16/ համալրում և վերլուծություն, կազմել համապատասխան հաշվետվություն: Կազմել է տարբեր ստորաբաժանումներից անհրաժեշտ ցուցանիշների հավաքագրման ժամանակացույց, համապատասխան աղյուսակները տրամադրվել են կառույցներին, մշակվել են ցուցանիշներից անհրաժեշտ և արդյունարար գնահատականներ դուրս բերելու նոր դիագրամներ, ապա հավաքագրվել են բոլոր տվյալները և կատարել համալիր վերլուծություն: Կազմակերպվել է ԳՄՑ-ի տպագրումը:

15. Համապատասխան ստորաբաժանումների աջակցությամբ իրականացրել հետևյալ հարցումները, կատարել այդ հարցումների արդյունքների մշակումներ և վերլուծություններ, կազմել հաշվետվություններ.

- 2014-15 ուստարում անցկացրած ուսանողների արտադրական պրակտիկայից բավարարվածության,

- ԵՊՀ ԻՄ ուսումնառությունից շրջանավարտների բավարարվածության,
- ԵՊՀ ԻՄ-ից ուսանողների բավարարվածության,
- ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ,
- ԵՊՀ ԻՄ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ,
- ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպված արտադրական և մանկավարժական պրակտիկաների ուսանողական գնահատման,
- ԵՊՀ ԻՄ-ում դասախոսների գիտական գործունեության վերաբերյալ:

16. Բաժնի մասնագետ, սոցիոլոգ, փիլ.գ.թ., դոցենտ Է.Կյուրեղյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ 2016թ. մարտից կազմակերպել է բանավեճի ակումբ, որի նպատակն է ազատ և անկաշկանդ մթնոլորտում քննարկել ուսանողներին հուզող տարբեր հիմնահարցեր: Ակումբի կողմից իրականացվել են «Հասարակական կարծիքը որպես բարոյական հսկիչ» /25.03.2016թ./, «Մայրության և գեղեցկության» օրվան նվիրված /07.04.2016թ./, «Հող և հայրենիք» /15.04.2016թ./ թեմաներով քննարկումներ: Ակումբը լայն արձագանք է գտել ուսանողների, դասախոսների և մասնաճյուղի աշխատակիցների շրջանում, այն պարբերաբար կաշխատի, և նրա հավաքներին կքննարկվեն նաև ուսանողների կարիքներին, դրանց վերհանման, այդ գործում ուսանողների ակտիվության ձևավորման, լուծումներ գտնելու մոտեցումներ:

17. Կազմել է Մասնագիտության կրթական ծրագրի ղեկավարի գործառնությունները, ինչը պայմանավորված էր մասնաճյուղի զարգացման նոր 2016-20թթ. ռազմավարական ծրագրով սկիզբ դրվող բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»-ի ստեղծման գործընթացով: Այն մասնագիտական կրթության կառավարման յուրահատուկ մոդել է, որը պետք է ստեղծի իքնազարգացող մանկավարժական միջավայր՝ որպես կրթական գործընթացի նորարարական չափանիշ:

18. Կազմակերպել է հանդիպում Ֆոկուս-խմբի հետ, իրականացնելով «Բակալավրական և մագիստրոսական կրթությունն իմ աչքերով» թեմայով քննարկում ավարտական կուրսերի այն ուսանողների հետ, ովքեր պատրաստվում են իրենց ուսումը շարունակելու մագիստրատուրայում: Շրջանավարտներին ներկայացվել են քննարկման ենթակա հարցերի մոտավոր շրջանակը, հարցաշարը բաժանվել է մասնակիցներին, նրանք անկեղծորեն պատասխանել են հարցերին, արտահայտել են սեփական կարծիք-գնահատականը նաև բանավոր: Հանդիպումը նպատակ ուներ պարզել ապագա մագիստրանտների մասնաճյուղում ստացած իրենց կրթությունից բավարարվածության աստիճանը, նրանց ակնկալիքներն ու սպասելիքները մասնաճյուղ ընդունվելիս, պատկերացումները մագիստրոսական կրթության, նրա նպատակների ու հնարավորությունների մասին և այլն: Ուրախալի է նշել, որ մագիստրանտներից երկուսից մեկը մտադրություն է հայտնել հետագայում զբաղվելու ուսումնա-գիտական գործունեությամբ, ինչը նրանց դարձնում է մասնաճյուղի կադրային ռեզերվ:

19. Ընթացքի մեջ են մի շարք աշխատանքներ.

- ՄԿԾ գնահատման չափանիշների մշակումը,
- մասնաճյուղում որակի ներքին ապահովման գործընթացների ձեռնարկի կազմումը,
- «Դասընթացի փաթեթ»-ի 2-րդ և 3-րդ մասերի մշակումը:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին